ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 39. ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

1

Խաչակրաց արշավանքները հենց այնպես չսկսվեցին: Դրա համար կային մի շարք պատճառներ: XI դարի վերջին տասնամյակներում արևմտաեվրոպական երկրներում անբերրիության, անասունների անկման, զանգվածային համաճարակների տարիներն իրար էին հաջորդում: Հիվանդություններն ու սովամահությունը սովորական երևույթ էին: ***Հուսահատությունից ու սովից հազարավոր գյուղացիներ*** խաչակրաց արշավանքներին մասնակցելը այդ վիճակից փրկվելու միակ միջոցն էին համարում:

Բացի դրանից՝ XI դարում Արևմտյան Եվրոպայի երկրներում մեծ թիվ էին կազմում ***ավար չունեցող ասպետները:*** Դրանք ավատատերերի կրտսեր որդիներն էին, որոնք որպես ժառանգություն ստանում էին ձի, զենք ու զրահ և պետք է իրենք հոգային սեփական ապրուստը: Նրանք ստիպված էին զբաղվել ավազակությամբ, մասնակցել պատերազմների: ***Ասպետությունը դարձավ խաչակրաց արշավանքների գլխավոր ուժը:*** Աղքատ ասպետները երազում էին կողոպտել Արևելքի հարստությունները և հարուստ ավատատերեր դառնալ:

Արևելքում նոր տիրույթներ ձեռք բերելու մասին երազում էր և կաթոլիկ եկեղեցին: Հռոմի Պապը ձգտում էր Արևելքի քրիստոնյա բնակչությանն իրեն ենթարկելով ընդլայնել իր իշխանությունը:

Ներքին այս պատճառներից բացի՝ գոյություն ունեին և արտաքին պատճառներ: ***1071 թ. Մանազկերտի ճակատամարտում*** սելջուկ թուրքերը, հաղթելով բյուզանդական զորքերին, գրավեցին ողջ Առաջավոր Ասիան և տիրեցին Արևելքի երկրների հետ կապող առևտրական բոլոր ուղիներին: Արևելյան ապրանքների ներմուծումը Եվրոպա գրեթե դադարեց, իսկ դրանց գները խիստ բարձրացան:

Այսպիսին էին խաչակրաց արշավանքները սկսելու ներքին և արտաքին պատճառները:

Խաչակիր պետությունները 4-ն էին՝

2

Եդեսայի կոմսությունը, Անտիոքի իշխանությունը, Տրիպոլիի դքսությունը և Երուսաղեմի թագավորությունը: Դրանցից գլխավորը Երուսաղեմի թագավորությունն էր: Խաչակիր մյուս իշխանությունները համարվում էին Երուսաղեմի արքայի վասալները:

Պաղեստինում ձևավորվեցին 3 խաչակիր օրդեններ.

Հոսպիտալյերների օրդենը ստեղծվեց Սուրբ վայրեր այցելող ուխտագնացներին հյուրընկալելու և հիվանդներին խնամելու նպատակով: Օրդենի անդամները կրում էին կարմիր գույնի հագուստ՝ վրան՝ սպիտակ խաչ:

Տամպլիերների օրդենը ստեղծվեց գրեթե նույն ժամանակ և պետք է հարձակումներից պաշտպաներ ու շտապ օգնության հասներ Սուրբ վայրեր այցելողներին: Օրդենի անդամները հագնում էին սպիտակ հագուստ՝ վրան կարմիր խաչ:

Տևտոնյան օրդենը կազմավորվեց III արշավանքի ընթացքում՝ XII դ. վերջին, և միավորում էր գերմանախոս ասպետներին: Օրդենի անդամները հագնում էին սպիտակ հագուստ՝ վրան սև խաչ: Օրդենը Պաղեստինից շուտով տեղափոխվեց Պրուսիա և լծվեց մերձբալթյան ժողովուրդների մեջ քրիստոնեությունը տարածելու գործին:

Օրդենների անդամ կարող էին դառնալ միայն ասպետները: Նրանք կուսակրոնության երդում էին տալիս և իրենց կյանքը նվիրում քրիստոնեական հավատը և քրիստոնյաներին պաշտպանելու գործին:

3

Խաչակիրները հավաքվեցին Վենետիկում և բանակցություններ սկսեցին նավերով Պաղեստին մեկնելու մասին: Օգտագործելով Բյուզանդիայում ծագած գահակալական գժտությունները, Վենետիկը խաչակիրներին ուղղեց իր առևտրական մրցակից Բյուզանդիայի դեմ: Խաչակիրները 1204 թ. գրավեցին Կոստանդնուպոլիսը և սոսկալի թալանի ենթարկեցին: Խաչակրաց արշավանքը վերածվեց քրիստոնյաների պատերազմի քրիստոնյաների դեմ: Կոստանդնուպոլիսի գրավումով խաչակրաց արշավանքն ավարտվեց՝ չհասնելով Երուսաղեմ: Խաչակիրները չէին էլ մտածում քրիստոնեական «սրբավայրերի ազատագրման» մասին և պատրաստ էին կողոպտելու քրիստոնյաներին այնպես, ինչպես մուսուլմաններին:

Բյուզանդական պատմաբանը խաչակիրների կողմից Կոստանդնուպոլիսը կողոպտելու մասին.

Գլխավոր տաճարի (Ս. Սոֆիայի) կողոպտման մասին սառնասրտորեն լսել անգամ չի կարելի: Արտակարգ գեղեցկության թանկարժեք իրերը կտոր-կտոր արեցին և բաժանեցին զինվորների միջև: Երբ նրանց հարկավոր էր տաճարից դուրս բերել թանկարժեք սուրբ անոթները, արվեստի արտասովոր և հազվագյուտ իրերը, արծաթն ու ոսկին, նրանք տաճարի գավիթները բերեցին թամբած ձիեր և ջորիներ:

Դժվար և անհնար էր աղերսանքով մեղմել և գթաշարժել այդ բարբարոս ժողովրդին: Ամեն ոք էլ պետք է երկյուղ կրեր իր կյանքի համար, փողոցներում լաց ու հեկեկանք էր, խաչմերուկներում՝ ողբ, տաճարներում՝ աղիողորմ հառաչանք: Այսպես էին անհիրավություն անում Արևմուտքի զորքերը, ոչ մեկին մի փոքր անգամ չողորմալով, և բոլորին զրկելով դրամից և ունեցվածքից, կացարանից և հագուստներից և բացարձակապես ոչինչ չթողնելով նրանց, ովքեր ինչ-որ բան ունեին:

Արշավանքները նպաստեցին Արևելք–Արևմուտք կապերի հետագա զարգացմանը: Մինչև խաչակրաց արշավանքները միջերկրածովյան առևտուրը արաբների և բյուզանդացիների ձեռքում էր, իսկ արշավանքների ընթացքում և հետո առևտրում սկսեցին գերիշխել իտալական քաղաքների՝ Վենետիկի, Պիզայի և Ճենովայի, վաճառականները:

Եվրոպացիները անմիջականորեն շփվեցին արևելյան մշակույթների հետ: Աճեց հետաքրքրությունը Արևելքի գիտության և արվեստի նկատմամբ: Արևելքի միջնորդությամբ եվրոպացիները ծանոթացան անտիկ դասականների շատ գործերի:

Խաչակիրները Եվրոպա տարան համեմունքներ, նոր մշակաբույսեր ու պտուղներ: Արևելքից Եվրոպա թափանցեցին հնդկացորենը, բրինձը, ձմերուկը, կիտրոնը, եղեգնաշաքարը և այլն:

Եվրոպացիները սովորեցին նոր տիպի նավեր կառուցել, որակյալ քարտեզներ գծել, օգտագործել կողմնացույցը: Նրանք սկսեցին զբաղվել ապակեգործությամբ և մետաքսագործությամբ: Եվրոպայում երևան եկան Արևելքից փոխառնված հողմաղացները:

Կարևոր փոփոխություններ տեղի ունեցան և եվրոպացիների կենցաղում: Մարդիկ սկսեցին ուտելուց առաջ լվանալ ձեռքերը, դանակ և պատառաքաղ օգտագործել, սովորեցին լողանալ տաք բաղնիքներում, փոխել սպիտակեղենը և վերնահագուստը: Ծանոթանալով Արևելքի վերնախավի մարդկանց կյանքին, եվրոպացի ավատատերերը սկսեցին ճոխ կյանք վարել, գեղեցիկ հագուստներ և թանկարժեք զենքեր կրել: